**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 155

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշումը՝
Որոշում եմ.

1.Դարպաս համայնքի 06-033-0001-0009 ծածկագրի 0,167 հա տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել 1 փող, 6 փոստային հասցեն:
2.Դիմել Կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը փոստային հասցեն գրանցելու:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 156

### 06-033-0001-0008 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 59-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով և հիմք ընդունելով <<Արսեն Իսահակյան Ռուդիկի>> Ա/Ձ -ի կողմից տրամադրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիր, քաղվածքը, Նադյա Մնացականյանի դիմումը՝
Որոշում եմ.

1. Վերականգնել Դարպաս համայնքի 06-033-0001-0008 ծածկագրի հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը.
   ա) հողամասի մակերեսը 0.134012 հա
   բ) հողամասի սահմանները և մակերեսը համաձայն հատակագծի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից 0.05 հա օրինական հողամասը և ինքնակամ զբաղեցված և առ այսօր առանց իրավունք հաստատող փաստաթղթերի օգտագործվող 0.084012հա մակերեսով հողամասի նկատմամբ և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող օրինական 1976թ. կառուցված 32.76քմ. և 113.28 քմ բնակելի տունը, 1985թ. կառուցված 27.86քմ.բնակելի տունը, 11.94 քմ և 62.16 քմ աստիճանահարթակը, 57.16 քմ ծեղնահարկը օրենքի ուժով, անհատույց ճանաչել Նադյա Սերյոժայի Մնացականյանի /ծնվ. 1958թ./, Սուրիկ Ավետիքի Մնացականյանի / ծնվ. 1954թ./, Արթուր Սուրիկի Մնացականյանի / ծնվ. 1977թ./ համատեղ սեփականության իրավունքը:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 157

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387- Ն որոշումը՝
Որոշում եմ.

1.Դարպաս համայնքի 06-033-0028-0021 ծածկագրի 0,270 հա տնամերձ հողամասին և բնակելի տանը տրամադրել 1 փող, 4 նրբ, 10 փոստային հասցեն:
2.Դիմել Կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանմանը փոստային հասցեն գրանցելու:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դարպաս համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Դարպաս, (0322)6-06-24, darpas.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
06 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 158

ԴԱՐՊԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 06-033-0002-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սանասար Կույումջյանի կողմից լիազորված անձ՝ Աղասի Սերգոյի Թովմասյանի դիմումը, << Ինեքս>> ՍՊԸ-ի կողմից հաստատված հողամասի և շինությունների հատակագիծը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 139/2021 համարի վկայագիրը, հաշվի առնելով այն, որ Դարպաս համայնքի 06-033-0002-0001 ծածկագրում գտնվող բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 0,096 հա ու այն գերազանցող 0,13789 հա մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1993թ-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,23389 հա:
Հողամասը զբաղեցվել և շահագործվում է 1990թ-ից:
Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 9-րդ կետերով, 10.06.2008թ. « Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կագավիճակի մասին» և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով `

Որոշում եմ.

1.Ճանաչել Սանասար Կույումջյանի / ծնված 1960թ./, Միեր Կույումջյանի / ծնված 1987թ./ համատեղ ս եփականության իրավունքը 06-033-0002-0001 ծածկագրում գտնվող անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 0,096 հա մակերեսեվ հողամասի նկատմամբ, իսկ սահմանված 0,096 հա մակերեսը գերազանցող 0,13789 հա մակերեսով չկառուցապատված հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարել Սանասար Կույումջյանին և Միեր Կույումջյանին՝ հողամասի կադաստրային արժեքով՝ 517100 /հինգ հարյուր տասնյոթ հազար հարյուր/ դրամով:
2.Ճանաչել Սանասար Կույումջյանի / ծնված 1960թ./, Միեր Կույումջյանի / ծնված 1987թ./ համատեղ սեփականության իրավունքը 06-033-0002-0001 ծածկագրում գտնվող 0,23389 հա հողամասի վրա գտնվող մինչև 2001 թվականը կառուցված բոլոր շինությունների նկատմամբ:
3. Դարպաս համայնքի ղեկավարի պաշտոնակատարի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 0,13789 հա մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի պաշտոնակատարի կողմից հաստատված հատակագծով:
5. Ուժը կորցրած ճանաչել Դարպաս համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 126 որոշումը, սեպտեմբերի 29-ի թիվ 113 որոշումը և սեպտեմբերի 07-ի թիվ 96 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — ԱՐՄԵՆ ԱԼՈՅԱՆ